ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

09.12.2014 18:41

Հարգելի գործընկերներ,
Այսօր աշխարհի բոլոր երկրներում նշվում է կոռուպցիայի դեմ պայքարի օրը: Դժվար է մատնանշել մի երկիր, որտեղ իսպառ բացակայում է կոռուպցիան, սակայն մենք քաղաքացիական հասարակության ինստիտուտի ներկայացուցիչներս և բոլոր նրանք, ովքեր իրենց համարում են այդ միասնական թիմի անդամ, պետք է պայքարենք այդ արատի դեմ, որովհետև հենց դա է խարխլում պետության հիմքերը ու դառնում չարի ու անօրինականության սկիզբը:
Մենք՝ փաստաբաններս, որպես արդարադատության պահանջատերեր մասնագիտական գործունեություն ծավալելու ընթացքում առաջինը պետք է խուսափենք կոռուպցիոն ռիսկերի մեջ մտնելուց:
Փաստաբանների պալատը պատերազմ է հայտարարել կոռուպցիոն ռիսկերի մեջ ներգրավված միջնորդ փաստաբանների դեմ և այդ գիծը մշտապես պահելու է:
Բոլորս պետք է հետևողական լինենք մեր գործունեության մեջ և հաղթանակը անպայման կուղեկցի մեզ:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })